ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք.Արտաշատ,Օգոստոսի 23,62
Ogostosi 23 str/62, Artashat
Հեռ./ TEL./ 0235/ 2-23-83
010/ 28-02-19
Ֆաքս/ Факс/Fax/2-50-00
Էլ. Փոստ/ E-mail: artashatmeria@bk.ru

Ե -4940
N----------
15 11
<------>> ----------2023թ

Մար-Մոս ՍՊԸ –ի տնօրեն
Պարոն Ա .Մակարյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի Պարոն Մակարյան

Արտաշատի համայնքապետարանի (այսուհետ Պատվիրատու) և ,Մար-Մոս ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2023 թվականի սեպտեմբերի 14-ին կնքվել է ,ԱՄԱՀ-ԷԱՃԾՁԲ-23/69 ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) :
Կնքված պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Արտաշատ համայնքի համայնքային սեփականություն համարվող գույքի գույքագրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:
Գույքագրման աշխատանքները սկսելուց առաջ Ձեր կողմից պետք է Պատվիատուի համաձայնեցման և հաստատմանը ներկայացվեր գույքագրման անցկացման մեթոդաբանությունը:
2023 թվականի հոկտեմբերի 10-ին Արտաշատի համայնքապետարան է մուտքագրվել /մուտքի թիվ 12112/ Ձեր կողմից առաջարկվող մեթոդաբանության նախագիծը:
Մեթոդաբանությունը հաստատելու կամ մերժելու նպատակով 2023 թվականի հոկտեմբերի 5-ին կայացել է պատասխանատու ստորաբաժանման նիստը:
Պատասխանատու ստորաբաժանման որոշմամբ մերժվել է Ձեր կողմից ներկայացրած մեթոդաբանությունը և հիմնավոր պատժառաբանությամբ, նշված բոլոր անահամապատասխանություններով և առաջարկությամբ 2023թվականի հոկտեմբերի 6-ին Արտաշատ համայնքի ղեկավարի թիվ Ե-4173 գրությամբ ուղղարկվել է ծանուցում տեխնիկական բնութագրին համապատասխան մեթոդաբանություն եռօրյա ժամկետում ներկայացնելու համար:
2023 թվականի հոկտեմբերի 10-ին Ձեր կողմից ներկայացվել է գրություն Արտաշատ համայնքի ղեկավարի թիվ Ե-4173 գրության պատասխանը, ներկայացված գրությամբ ոչ թե շտկվել և պատշաճ ներկայացվել են այմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան մեթոդաբանություն այլ ներկայացվել են անհիմն պատճառաբանություններ :

Արտաշատի համայնքապետարանի կողմից 2023 թվականի հոկտեմբերի 13-ին /համար Ե-4290/ կրկին Ձեզ առաջարկել ենք եռօրյա ժամկետում ներկայացնել այմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան մեթոդաբանություն և գրության մեջ մանրամասնորեն նշել ենք բոլոր անհամապատասխանությունների և առաջարկությունների մասին:
2023 թվականի հոկտեմբերի 18-ին Ձեր կողմից ներկայացված գրությամբ շտկումներ չեն եղել և ներկայացրել եք դիրքորոշում այլ հարցերի շուրջ :
Արտաշատի համայնքապետարանի կողմից 2023 թվականի հոկտեմբերի 23-ին /համար Ե-4374/ կրկին Ձեզ առաջարկել ենք եռօրյա ժամկետում ներկայացնել այմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան մեթոդաբանություն և պարտավորությունների չիրականացման, անհարկի ձգձգման հիմնավոր պատճառներ:
2023 թվականի հոկտեմբերի 27-ին Ձեր կողմից ներկայացված գրությամբ շտկումներ չեն եղել , այլ մեթոդաբանությունը չներկայացնելու անհասկանալի պատճառներ եք ներկայացրել:
Ձեզ Արտաշատ համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 01-ի թիվ Ե4580 գրությամբ կրկին անգամ հորդորել ենք իրականացնել Ձեր կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունները:
Ձեր կողմից 2023 թվականի նոյեմբերի 9-ի գրությամբ կրկին անդրադարձ չեք կատարել մեթոդաբանության ներկայացմանը:
Ձեր կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելու հետևանքով ձախողվել են Արտաշատի համայնքապետարանի 2023 թվականի գույքագրման աշխատանքները:
Հիմք ընդունելով պայմանագրի 7. 11 կետը՝ Արտաշատի համայնքապետարանի (այսուհետ Պատվիրատու) և «Մար-Մոս ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2023 թվականի սեպտեմբերի 14-ին կնքված «ԱՄԱՀ-ԷԱՃԾՁԲ-23/69 ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագիրը 2023 թվականի նոյեմբերի 15-ին ամբողջությամբ միակողմանի լուծել:
Առաջարկվում է Ձեզ 10 /տասը/ օրացուցային օրվա ընթացքում վճարել պայմանագրի ապահովման և որակավորման ապահովման գումարները:

Արտաշատ համայնքի ղեկավար՝ **Կ. Մկրտչյան**

Կատարող Փայլակ Հակոբյան
Հեռ 043-12-12-02